

# ԵՐԵՄՆԱՄԵԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՎ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 20րդ հատորն է որ հրապարակ կ'իջնէ ահա, հատորին երախայրիքին լոյս ընծայումէն 30 տարի ետք: Այս առթիւ երախտիքի ու գնահատութեան խօսք ունինք Դոկտ. Երուանդ Քասունիին, որ անփոխարինելի դեր ստանձնած է Հանդէսի ծննդոցին եւ առաջին տասն հատորներու լոյս ընծայման գործին մէջ:

Լիբանանի երկարամեայ պատերազմը կարեւոր խոչընդոտ մը եղաւ այս տարեգիրքին ընդմիջումներով լոյս ընծայման: Ուրախ ենք յայտնելու սակայն, որ վերջին տասն տարիներուն ան լոյս տեսաւ անընդմէջ, տարեկան պարբերականութեամբ:

ՀՀՀի 20րդ հատորին բովանդակութիւնը վկան է այն առաջադրանքներուն ու ձգտումներուն, որոնց կ'անդրադառնար Հանդէսին խմբագրութիւնը վերջին տարիներու խմբագրականներով: Արդարեւ, այս հատորը նախորդներէն աւելի՝ եւս կ'առանձնանայ իր ոչ-աւանդական միութեամբ եւ հեղինակներով:

Այս տարի 45ամեակն է Հայկազեան Համալսարանին, որուն վերջին 30 տարիներու կեանքին կը շաղկապուի Համալսարանին մէջ հայագիտական գործունէութիւնը: Հայկազեան Հայագիտական Հանդէսը լոյս պիտի տեսնէ այնքան ատեն որքան գոյութիւն պիտի ունենայ Հայկազեան Համալսարանը՝ հայ միտքի ու մտածումներու այս կեդրոնը, որուն ինքնուրոյն եւ հայկական դիմագիծ հաղորդող երեսփոխաններն է ան, Հայագիտական ամբիոնին ու գրադարանին հետ միատեղ: Համալսարանը կը հանդիսանայ ակադեմական այն քուրան, ուրկէ ՀՀՀն իր մղումն ու թափը կ'առնէ, եւ որուն յարաբերութիւններուն լոյսին տակ՝ կ'առնչուի արաբական-օտար գիտաակադեմական եւ բանասիրական առօրեային, ինչպէս նաեւ առնչակից կը դարձնէ ոչ-հայ բանասերը՝ հայագիտութեան: Ինչ խօսք՝ Հանդէսը տակաւին երկար ճանապարհ ունի կտրելիք, մինչեւ որ որոշ յաջողութեան հասնի այս ճակատին վրայ եւս:

Իր երեսնամեայ երթի ընթացքին, ՀՀՀն արձանագրեց կարեւոր նուաճումներ ու եկաւ իր տեղը գրաւելու Միջին Արեւելքի հայագիտութեան պատմութեան ու զարգացման մէջ: Սակայն,



այստեղ եւս ան տակաւին երկար ուղի ունի երթալիք՝ արմատաւորուելու Միջին Արեւելքի հայկական համայնքներուն մէջ, գրաւոր պատմութեան յանձնելու անոնց նախաեղեռնեան եւ յետ-եղեռնեան երթը եւ լոյսին բերելու արխիւային այն հսկայ նիւթը որ կը մթագնի տասնամեակներու փոշիին ու մոռացութեան տակ: Նման արեւելում մը կրնայ սատարել աշխարհագրական Մերձատը եւ Միջին Արեւելքի ու Հիւսիսային Ափրիկէի հայ համայնքներու ինքնաճանաչման ու վերելքին:

Սակայն, ՀՀ-ի խմբագրութիւնը այսքանով փակուած չի նկատեր իր առաջադրանքները: Չեռք առնուած միջոցառումներու շարքին է յառաջիկայ տարի կեանքի կոչուող Խորհրդատուներու Մարմինը, որով աւելի եւս պիտի գործնականանայ նիւթերու եւ մանաւանդ աշխատակիցներու ծիրի ընդարձակումը: Աշխատակիցներու՝ նամանաւանդ, երբ Սփիւքքի մէջ օրատուր կը նուազի հայ գրիչներուն թիւը, որ մեծագոյն մտահոգութիւններէն է խմբագրութեան:

ՀՀ-ի խմբագրութիւնը չ'անտեսեր նաեւ համաշխարհային քաղաքակրթութեան ընթացքը: Համաշխարհայնացումը իր համընդգրկունութեամբ, միաժամանակ կրնայ վտանգել ու սատարել հայագիտութեան՝ նայած վերջինս ինչպէս կը դիրքորոշուի այս ահեղ երթին հանդէպ: Արդարեւ, կարողական նոր հնարատրութիւններու ձեռքբերմամբ՝ պատշաճելով ու նպաստաւորելով ժամանակակից համակարգչային նուաճումներէն ու համաշխարհայնացման ընձեռած լայնածիր հնարատրութիւններէն, կարելի է ընդարձակել հայագիտութեան կարելիութիւններուն, մատչելիութեան ու հասանելիութեան սահմանները, աշխատուծի պակասը գէթ մասնակիօրէն համալրել որոնումի, հաղորդակցութեան, կազմակերպումի ու նման թեքնիք թէ այլ միջոցներու դէմ խոչընդոտներու կտրուկ նուազումով:

Խմբագրութիւն

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Դոկտ. Արտա երմեքճի

Դոկտ. Արշալոյս Հ. Թովալեան

Դոկտ. Արա Սանճեան

Անդրանիկ Տագեւեան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՍԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Վրդ. Կռանեան



## OBJECTIVES ON OUR THIRTIETH ANNIVERSARY

The *Haigazian Armenological Review*, which was launched 30 years ago, is today bringing out its twentieth volume. On this occasion, a word of gratitude and appreciation is due to Dr. Yervant Kassouny for the unique role he has played in the creation of the *HAR* and for the publication of its first ten volumes.

The long years of the Lebanese War were responsible for the interruptions of the *Review*. However, we are pleased to inform you that since 1991, the *Review* has come out every year without fail.

The contents of the 20<sup>th</sup> volume of the *HAR* are a live testimony of the Editorial Board's previously expressed dispositions and aspirations. Presently, the actual volume distinguishes itself from the previous ones by its varied content of non-conformist themes and authors.

Haigazian University celebrates this year the 45th anniversary of its foundation, the last 30 years of which have been closely entwined with the Armenian activities of the University. The *Haigazian Armenological Review* will continue to be published so long as the Armenian identity and spirit of Haigazian prevail in this University, primarily embodied by the Department of Armenian Studies and the Armenian Library.

For the reasons mentioned above, this University is the academic center from which the *Review* draws its impetus and stimulus and through which it can make contact with philologists in the Arab world. Our goal at the *Review* is to further enlarge these enriching contacts.

During the course of the past thirty years, the *Review* scored important achievements and occupied an important position in the

history and development of Armenian studies. Nevertheless, much still needs to be done before it can become deeply rooted in the Armenian communities of the Middle East. It still needs to revive the large amount of pre and post genocidal unpublished material before it is totally lost. This must be discovered and published because it will contribute greatly to the self-knowledge and growth of the Armenian communities.

The Board of the *HAR* does not confine itself merely to these proposals and resolutions. In line with its objectives and recommendations, it will form during the forthcoming year, a body of consultants who will widen the scope of the *Review* by soliciting new contributors and fresh material even though this will be difficult in light of the dwindling number of Armenologists in the Armenian Diaspora circles.

On the other hand, the Board deems it necessary that Armenology adapt to globalization in a manner which serves the growth and spread of Armenology.

#### EDITORIAL STAFF

##### EDITORIAL STAFF

Dr. Arda Ekmekji

Dr. Arshalouyse H. Topalian

Antranik Dakessian

Dr. Ara Sanjian

##### EDITOR-IN-CHIEF

Father Antranik Granian